(VI—IV դդ. մ. թ. ա.)[8], Դմանիսիի դամբարաններից (VII—VI դդ. մ. թ. ա.)[9]։

Արծաթե մատանիները յոթն են, պատրաստված կտրվածքում 1 մմ հաստություն ունեցող կլոր լարից։ Երեքը զսպանակաձև են, երկու կամ երեք անգամ իրար վրա պտտվող (աղ. II, նկ. 4), երկուսը տարբեր ձևերով փաթաթված լարեր են, ոչ զսպանակաձև, իրարից հեռացող ծայրերով (աղ. II, նկ. 5, 6)։

Մյուս երկու մատանիները օղակաձև են։ Մեկի ծայրերը բարակեցված են և իրարից հեռացված, իսկ վրայի փոքրիկ ակոսիկները օձագլխի տեսք են տալիս նրանց (աղ. II, նկ. 7, 8)։

Շատ նույնը են արծաթե կոճականման զարդերը, որոնք խիստ դյուրաբեկ են և այդ պատճառով ոչ բոլորն են պահպանվել։ Մնացած տասներեքը պատրաստված են միլիմետրի մոտ 1/5-ական հաստության արծաթե նրբաթիթեղից, 1—1,6 սմ տրամագիծ ունեն, եզրերին և մի քանիսի նաև կենտրոնական մասում ետևի կողմից կետիկներ են դրվագված, երկու կողմերում ունեն 2-ական կամ 3-ական անցքեր, հավանաբար կարվելու համար (աղ. II, նկ. 9—12)։

Արծաթե ուլունքները տարբեր են. կան կոճանման, խողովակաձև, տակառաձև, բաժանարար ուլունքներ (որի նմանը գտնվեց նաև ոսկուց), գտնվել է ինչ-որ իրի արծաթե երեսապատը (աղ. II, նկ. 13—20)։ Բրոնզե խոշոր կոճակները, որոնք ունեն արծաթե, լավ պահպանված, փայլուն երեսապատ, ութեր են։ Սրանք կտրվել են արծաթե թիթեղից, հագցվել բրոնզե կոճակին և հակառակ կողմից ծալվելով՝ ամրացվել (աղ. II, նկ. 21, 22)։

Արմանիսի երկրաբանական արշավախմբի պետ Ս. Գոգինյանի տեղեկությունների համաձայն ոսկյա իրերը, ամենայն հավանականությամբ, կարող էին պատրաստված լինել Արմանիսի հանքավայրի ոսկուց, որտեղ հանքային մարմինների վրա երևացող փոսերը վկայում են հնում նրանց շահագործված լինելու մասին, իսկ հանքավայրը կազմող բլուրը հնում կոչվել է Ոսկեսար։ Այստեղ երկրաբանական աշխատանքների ժամանակ հայտնաբերված սափորները, թասերն ու բրեղանները հար և նման են Լոռի Բերդի դամբարանի նյութերին նույնիսկ խեցու որակով, որը կարող է խոսել բնակավայրի և հանքավայրի համաժամանակյա գոյության և կապերի մասին։ Գոգինյանի հավաստիացմամբ, արծաթը նույնպես հանդես է գալիս հնում շահագործված բազմաթիվ երակային, հանքային մարմինների առկայությամբ, որոնց մեջ արծաթի պարունակությունը կազմում է 1000 և ավելի գ/տոննա։ Նման երակներ տարածված են ինչպես Արմանիսի ոսկու հանքավայրի շրջանում, այնպես էլ Պրիվոլնոյե հանքադաշտի շրջանում։

Այսպիսով, Լոռի Բերդի № 2 դամբարանը հնագիտական մի հուշարձան է, որտեղ կատարվել են երկու հարուստ թաղումներ՝ XIV—XIII դդ. մ. թ. ա. և VII—VI դդ. մ. թ. ա.։ Այստեղ ներկայացված նյութերը, բացի վերևում հիշատակված երկու ոսկե ուլունքներից, պատկանում են վերջին թաղմանը, որոնք ուղեկցվում են երկաթի լայն տարածման ժամանակաշրջանին պատկանող այլ բազմաթիվ նյութերով։

Ս. ԴԵՎԵՋՅԱՆ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Զարգացած բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանը (մ. թ. ա. II հազարամյակի վերջ, I հազ. առաջին չորս դարերը) եզրափակում է նախնադարյան հասարակարգի կարևորագույն փուլը՝։ Այս ժամանակաշրջանում նկատվում է լեռնային ցեղերի մշակույթի զարգացում, որը կապված էր նոր հանքավայրերի հայտնաբերման և լեռնային արոտավայրերի օգտագործման հետ։ Տեղի է ունենում տոհմատիրական հարաբերությունների քայքայում, ցեղերի միավորում խոշոր միությունների մեջ և հիմքեր են ստեղծվում ստրկատիրական պետությունների կազմակերպման համար։

Այս տեսակետից մեծ արժեք ունի այն հարուստ հնագիտական նյութը, որը հայտնաբերվել է Անդրկովկասի մետաղագործական հնագույն կենտրոններից մեկում՝ Թումանյանի (նախկին Ալավերդի) շրջանում[3]։ Դեռևս 1877 թ. Դեբեդ գետի բարձրադիր սարահարթին, Ոռնակ (այժմ Ակներ) գյուղի մոտ, Ա. Դ. Երիցյանը պեղեց 23 դամբարան, որոնք նա վերագրեց բրոնզի դարի երկու ժամանակաշրջաններին։ Հայաստանի և Անդրկովկասի հնագիտության համար մեծ արժեք ունեն Մորգանի աշխատանք-

8 Д. Л. Коридзе, Погребальный инвентарь одного каменного ящика из Земо-Авчала, «Вестник» гос. музея Грузии, 1956, էջ 318, նկ. 2։

9 С. Н. Макалатия, Раскопки Дванского могильника, СА, 1949, XI.

1 Б. Б. Пиотровский, Археология Закавказья, Л., 1949, էջ 55։

2 Նույն տեղում։

3 А. А. Иессен, Из истории древнейшей металлургии Кавказа, М., 1935.

ները, որը 1887—1888 թթ. Թումանյանի շրջանում պեղեց մեծ քանակությամբ դամբարաններ, որոնք հիմնականում վերաբերում են երկաթի ինդուստրիային։ Լալվարում պեղված հուշարձաններից, անշուշտ, հատուկ հետաքրքրություն է ներկայացնում Ալավերդու մոտ գտնվող Մուսիների դամբարանադաշտը, որտեղ Մորգանը 1882 թ. ընթացքում պեղեց 582 քարարկղային դամբարան։ Պեղված նյութի բնորոշ իրերից են բրոնզե երկփետուրանի սկյութական նետասլաքները, որոնք թվագրվում են մ. թ. ա. VII դ. վերջով և VI դ. սկզբով։ Նման հուշարձաններ նա պեղել է նաև Սադախլոյում։ 1893 թ. Ն. Յա. Մարը նշված դամբանադաշտում ծավալեց լայն պեղումներ։ Հայտնաբերված նյութը, որի մեծ մասը մինչև այժմ չի հրատարակված, վերաբերում էր վերոհիշյալ ժամանակաշրջանին[5]։

Կարևոր են Ե. Ս. Թաղայշվիլու 1894 թ. աշխատանքները Ոռնակում, որոնք ժամանակագրական հիմք տվեցին ինչպես երկաթի ընդհանրական, այնպես էլ ավելի ուշ շրջանների հուշարձաններին[6]։ Այստեղ նա պեղեց 40 քարարկղային դամբարան, որոնք հիմնականում բավական աղքատ էին։ Սակայն պետք է նշել № 5 և № 6 դամբարանները, որոնք թույլ են տալիս որոշելու հուշարձանի ժամանակագրությունը[7]։

Երկաթի սկզբնական ժամանակաշրջանին վերաբերող № 16 դամբարանը հնագիտական գրականության մեջ առաջին անգամ նկարագրել է Բ. Բ. Պիոտրովսկին։ Նշված դամբարանը պարունակում էր բրոնզե սուր, կաղին, սակրը, տեգերի երկաթե ծայրեր, դանակ, որոնք բնորոշ են տվյալ ժամանակաշրջանի համար։ № 5 դամբարանը պարունակում էր համեմատարար ուշ շրջանին բնորոշ իրեր (մ. թ. ա. VII—VI դդ.)՝ բրոնզե օղակաձև կախիչ, բրոնզե մանյակ, կետաղարդ ունելիներ, ֆիբուլա, բրոնզե օձագլուխ ապարանջան, երկու կարդարուն օղակ, երկաթե կեռ դանակ, տեգի փորր ծայր, երկու երկաթե դաշույն բրոնզե պատյաններում, սրոցաքար և երկաթե օղակ։ Խեցեղենը բաղկացած է թաղարից, կճուճից, վերականգնված ամբողջական անոթից, որը կազմված էր երեք փոքրիկ հաղորդվող կանթերով անոթներից և մի շարք բեկորներից։ Այսպիսով, ինչպես երևում է վերոհիշյալից, նշված շրջանը բազմիցս հետազոտվել է հնագետների կողմից։ Վերջին տարիների ընթացքում (1957—1958) նոր հայտնագործություններ կատարվեցին Դերեղ գետի ավազանի տարբեր վայրերում՝ Գուգարքի շրջանի Նղեգնուտ և Նոյեմբերյանի շրջանի Ջուջևան գյուղերում (Բ. Ս. Խաչատրյան, Գ. Հ. Կարախանյան)։ Այս դամբարանային նյութի բնորոշ առարկաներից խեցեղենը (փորագրված գծեր, փայլանախշով արված նեղ ու լայն գծեր և եռանկյունիներ ունեցող նեղ, կարճ վզով, մեկ փոքր ունկով կրճուճները) թույլ է տալիս հիշյալ կոմպլեքսը թվագրել մ. թ. ա. I հազարամյակի առաջին երկու դարերով։ 1964 և 1967 թթ. ամռան ամիսներին մեր կողմից նույնպես նոր իրեր պեղվեցին, այս անգամ Դսեղում և Օձունում։ Մեծ արժեք են ներկայացնում նաև 1969 թ. մայիսին Լորուտում, Շամուտում պատահականորեն հայտնաբերված նյութերը, որոնք էլ ավելի են հարստացնում մեր գիտելիքները Տաշիր-Զորագետի վաղ բրոնզի դարի և վաղ երկաթի դարի ժամանակաշրջանի մասին։ Բացի վերոհիշյալից, Հայաստանի պետական պատմական թանգարանի հարուստ նկուղներում պահվում են արժեքավոր նյութեր, որոնք ձեռք են բերվել տարբեր ժամանակ՝ հողային աշխատանքների ընթացքում պատահաբար բացված հուշարձաններից։ Տվյալ հոդվածում նյութի ուսումնասիրումը տրվում է ըստ վայրերի, ժամանակագրական հերթականությամբ։

Հայտնագործություններ Ալավերդիում։ Սրբանց թվին են պատկանում բազմաթիվ անգամ հրատարակված զանազան բրոնզե առարկաները։ Դա կտցավոր կացնի լավագույն նմուշն է, որը գտնվել է 1934 թ. շինարարական աշխատանքների ժամանակ (գույք 759/6)[8], երկ.՝ 24 սմ, դաստակի լայն.՝ 3,0 սմ, երկար.՝ 16 սմ, հաստ.՝ 3 սմ)։ Երկրորդ նման կացինը, որը նախորդից տարբերվում է փոքր չափերով, պահվում է Լենինականի թանգարանում։ Անդրկովկասում նման կացիններ հայտնի են նաև Վրաստանից (Դմանիսի, Կախեթ)։ Հնարավոր է,

---

[4] J. de Morgan, Mission Scientifique au Caucase, p. I, Paris, 1889.

[5] Н. Я. Марр, Отчеты археологической комиссии (ОАК) за 1894 г. Նյութի մի մասը պահվում է Հայաստանի պետ. պատմ. թանգ., գույք 696, 697, 698, 702, 703, 705, 706, 707, 708, իսկ մեծ մասը՝ Էրմիտաժի Արևելքի բաժնում։

[6] Е. С. Такайшвили, ОАК за 1894.

[7] Б. Б. Пиотровский, նշվ. աշխ., էջ 64 (նյութը պահվում է Էրմիտաժի Արևելքի բաժնում)։

[8] Տե՛ս А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, էջ 32, նկ. 50; С. А. Есаян, Оружие и военное дело древней Армении. Ереван, 1966, էջ 34, տախտակ V, նկ. 6։

որ Վրաստանի պետական թանգարանում պահվող, գույքահամար չունեցող մեկ ուրիշ կրտցավոր կացին նույնպես հայտնաբերվել է Հայաստանում։ Վերոհիշյալ կացինը տարածված է ասորեստանյան նյութերում՝ Աշուր, Թեփե-Հավրի IV շերտը, Նարամսինի ստելայի վրա փորագրված մարտական կացինը (մ. թ. ա. XXIII դ.) և այլն, և դա թույլ է տալիս Անդրկովկասի կտցավոր կացինները թվագրել մ. թ. ա. III հազ. երկրորդ կեսով[9]։

Հաջորդ խումբը սակրերն են (գույք 759։ 3, 4), որոնք ունեն կիսալուսնի տեսքի պանդվսաձև շեղբեր, իսկ բլթակի կենտրոնում՝ ձվաձև անցք։ Բլթակի վերին մասը ունի սեպ։ Հայաստանի տերիտորիայում նման, այսպես կոչված, անդրկովկասյան տիպի սակրեր հայտնի են Լճաշենի հարուստ դամբարաններից, Արթիկից, Ռոնակից և շատ ուրիշ հուշարձաններից[10]։ Նշված առարկաներից հայտնաբերվել են նաև Անդրկովկասի այլ վայրերում՝ Սամթավրոյում[11], Մինգեչաուրում[12], Արշաձորում[13] և այլն ու հիմնականում թվագրվում են զարգացած բրոնզի ժամանակաշրջանով (մ. թ. ա. XIII—X դդ.)։ Հայաստանում լայն տարածված աշխատանքային գործիքների թվին են պատկանում նաև ձեռքի տափակ կացինները, որոնք վերին մասում ունեն երկկողմանի ելուստներ (գույք 759/5) և մինչ օրս էլ օգտագործվում են Հայաստանի ու Վրաստանի շրջաններում կաշեգործության մեջ։ Տրվյալ կացինը ունի լայն շեղբ և ծալված ելուստներ։ Բռնակը մաշված է[14]։

Հայաստանում հնագույն կացիններից մեկը հայտնաբերվել է Կիրովականի՝ մ. թ. ա. II հազ. կեսին պատկանող հարուստ դամբարանում։ Ավելի ուշ ժամանակաշրջանի է Լճաշենի դամբարանաբլուրի նույնանման կացինը, որը գտնվել է բրոնզե իրերի հարուստ կոմպլեքսում։ Այս առարկաները հաճախակի են հանդիպում մ. թ. ա. II հազ. վերջին պատկանող դամբարաններում, կացին-սակրերի հետ միասին։ Սրանք հայտնի են նաև Լենինականի, Ռոնակի, Կամոյի, Էջմիածնի և այլ դամբարաններից։ Անդրկովկասում այսպիսի կացիններ պեղվել են նաև Արշաձորում, Խոջալիում, Մինգեչաուրում և այլուր։ Հաջորդ խումբը ներկայացված է դաշույնով (գույք 759/7), որն ունի շրջանակաձև բռնակ և նեղ եռանկյունաձև շեղբ, որի վրա անցկացված են դեպի ներքև նեղացող երկու զուգահեռ գծեր։ Այս դաշույնի նմանը պեղվել է մեր կողմից Դիլիջանում 1960 թ. (դամբ. 1)[15]։ Նկարագրված իրերից գտնվել են նաև Ռեգկինլագերում, Մինգեչաուրում[16] և թվագրվում են մ. թ. ա. VIII դ.։ Ալավերդիի սուրը (գույք 759/8) ունի նեղ, երկար, կտրվածքում ձվաձև շեղբ և տափակ բռնակ։ Վերին մասը և ծայրը կոտրված են։ Սրի պահպանված մասը 40 սմ է, շեղբինը՝ 33 սմ։ Նկարագրված սրին նման է Արթիկի դամբարանի սուրը, որը, սակայն, լավ է պահպանված և տարբերվում է նախորդից մի շարք այլ նրբություններով[17]։ Այս արտադրանքը հայտնի է նաև Կարմիր-վանքից[18], Լճաշենից[19], Էջմիածնից։ Հայտնի են զուգահեռներ Պարսկական Թալիշից (մ. թ. ա. 1456—1365 թթ.), Ռաս-Շամրայից (Ուգարիտ, (մ. թ. ա. 1450—1365 թթ.) և այլն[20]։ Այսպիսով, Ալավերդու սուրը նույնպես կարող է տե-

---

[9] Гордон Чайлд, У истоков европейской цивилизации, М., 1956.

[10] А. О. Мнацаканян, Раскопки курганов на побережье оз. Севан в 1956, «Советская археология» (СА), 1957, № 2, էջ 149, նկ. 6; Т. С. Хачатрян, Материальная культура древнего Артика, Ереван, 1963, էջ 56, նկ. 1· ОАК за 1894 г., էջ 14—15, նկ. 2; С. А. Есаян, նշվ. աշխ., էջ 37, աղ. VI, նկ. 2, 3։

[11] Т. Н. Чубинишвили, Древнейшие археологические памятники Мцхета, Тбилиси, 1957, նկ. 16։

[12] Г. М. Асланов, Р. М. Вандов, Г. Н. Поне, Древний Мингечаур, Баку, 1959, աղ. XII, նկ. 3։

[13] К. Х. Кушнарева, Некоторые памятники эпохи поздней бронзы в Нагорном Карабахе, «Советская археология» (сборник), XXVII, 1957, էջ 156։

[14] Т. Хачатрян, Орудия труда эпохи поздней бронзы и раннего железа Армении, պետ. պատմ. թանգ. «Աշխատություններ», հատ. V, 1959, էջ 235, նկ. 56, 8։

[15] Լ. Լ. Կարապետյան, Ա. Ն. Շահինյան, Հնագիտական հայտնագործություններ Դիլիջանում, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1961, № 12, էջ 73, նկ. 4։

[16] Т. Пассек и Б. Латынин, Очерки доистории Сев. Азербайджана («Известия об-ва обследования и изучения Азербайджана»), Баку, 1926, № 3, նկ. 13—14։ Г. М. Асланов, Р. М. Вандов, Г. Н. Поне, նշվ. աշխ., աղ. 13, նկ. 4։

[17] Т. С. Хачатрян, նշվ. աշխ., էջ 52։

[18] «Известия археологической комиссии (ИАК), 1907, вып. 29, էջ 11, նկ. 31։

[19] С. А. Есаян, նշվ. աշխ., էջ 87, նկ. 4—2։

[20] Cl. Shaeffer Stratigraphie Comparee et chronologie de l'Asie Occidental (III et II millineres), Syrie, Palestine, Asie Mineure, Chipre, Pergamot, նկ. 44, 215, 217, 443։

դարձվել այդ ժամանակագրական շրջանակներում։

Զանազան տարատեսակներով են ներկայացված բրոնզե ապարանջանները (12 հատ)։ Դրանք են՝ զանգվածեղ, կտրվածքում կլոր միաձույլ ապարանջանը, չորս շարքանի գծիկներով, որոնցից երկուսը ունեն նշված զարդից սկսվող երկշարք թեք գծիկներ (գույք 759/14, տրամագիծը՝ 9,4 սմ), երկու հարթ ապարանջաններ՝ միացված ծայրերով (գույք 759/21, 22), ոոմբաձև կտրվածքով, անջատված ծայրերով ապարանջանը (գույք 759/10, տրամ. 5,5 սմ)։ Նշված առարկաները հայտնի են Գեղարոտից[21], Բջնիից, Բասարգեչարից և այլն, ու մեծ մասամբ թվագրվում են մ. թ. ա. XIII—VI դդ.։ Սեգմենտաձև ապարանջանները երկուսն են (գույք 759/17, 18, տրամ.՝ 5,5 սմ—6,0 սմ)։ Արտաքինից կլոր են, ներսում՝ տափակ։ Սրանք հայտնի են Բջնիի, Կամոյի, Մուխանի, Բասարգեչարի, Թումանյանի, Լենինականի[22] դամբարաններից և թվագրվում են մ. թ. ա. IX—VI դդ.։ Օձագլուխ, կտրվածքում տափակ և ստորին մասում լայնացող ապարանջանը[23] (գույք 759/15), ի տարբերություն Աթարբեկյանի արծաթե ապարանջանի, ոճավորությամբ տարբերվում է Աստղաձորի, Արմավիրի, Խզնաուզի, Արին-բերդի, Կարմիր-բլուրի և շատ ուրիշ օրինակներից, որոնք ունեն ցայտուն արտահայտված գլուխ։ Սրանց հիմնական ժամանակագրական շրջանակներն են մ. թ. ա. IX—IV դդ.։ 11 օրինակներով են ներկայացված հասարակ, հարթ, կտրվածքում տափակ և կլոր ապարանջանները, անջատ ու մեկը մյուսի վրա անցկացրած ծայրերով (գույք 759/16, 23, 24, 27, 30 և այլն, տրամ.՝ 3,5—6,0 սմ)։ Չորս օրինակներն էլ ունեն մեկը մյուսի վրա ելնող ծայրեր, իսկ գլուխները զարդարված են կամ ուղիղ գծիկներով (գույք 759/25, 39) կամ մեկը մյուսի մեջ հագցրված անկյուններով (գույք 759/26, 40, տրամ.՝ 5—6,5 սմ)։ Սրանց և վերոհիշյալ արտադրանքի զուգահեռները կարելի է գտնել Սևանում, Կամոյում, Բասարգեչարում, Դիլիջանում, Ռեդկինլագերում և այլուր, որոնց ժամանակագրական շրջանակները հենվում են ինչպես վաղ ուրարտական (Զոլարար, Հայրավանք), այնպես էլ վաղ հայկական (Աթարբեկյան, Ջրառատ) հուշարձանների վրա՝ մ. թ. ա. IX—VIII դդ., V—IV դդ.։ Վերջապես եղակի օրինակով է ներկայացված չորս ոլորանի ապարանջանը (գույք 759/11)։ Պետք է նշել, որ ապարանջանների ժամանակագրական սահմանները դուրս են գալիս վերոհիշյալ շրջանակներից։ Սրանք տարածված էին դեռևս էնեոլիթյան ժամանակաշրջանում և բացի զարդարանքից ծառայում էին նաև որպես փոխանակության միջոց։ Զիասարքի առարկաներից հետաքրքրություն են ներկայացնում այսպես կոչված առաջավորասիական տիպի սանձերը, որոնց բերանը մտնող մասը թիթեղյա է, քիչ ձվաձև, հասարակ, իսկ կողքի մասերը սկավառակաձև (գույք 759/13)։ Այս սանձերը լայն տարածում են ստացել մ. թ. ա. IX—VIII դդ.։ Սրանց զուգահեռները հայտնի են Հայաստանի բազմաթիվ հուշարձաններից (Սևանի ավազան, Մակարաշեն, Կարմիր-բլուր և այլն)։ Ավելի վաղ խումբ են կազմում Լճաշենի, Արթիկի և Քվեմո-Սասիրեթիի (Վրաստան) սանձերը, ինչպես նաև Թել-էլ-Ամարնայի, Ռաս-Շամրայի և այլ հուշարձանների հինարևելյան օրինակները։

Հայտնի առարկաներից են մանյակները (գույք 759/41), որոնք տարածված էին ինչպես Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի, առաջավորասիական երկրների, Արևելյան Եվրոպայի մ. թ. ա. I հազարամյակի կեսի կոմպլեքսներում, այնպես էլ ավելի վաղ հուշարձաններում։ Այս խմբի վերջին օրինակն է ծարիրե քառանկյուն կախիքը (գույք N՝ չկա)՝ ամրացնելու համար երկկույղ անցքերով։

Նամլուղ. Գյուղը գտնվում է Ալավերդի երկաթուղային կայարանից 8 կմ հեռավորության վրա։ Այստեղ գտնված վաղ առարկաներից պետք է նշել երկու վաղ բրոնզեդարյան գորշ դարշնավուն գույնի բնորոշ կավանոթները, որոնցից մեկը անզարդ է (գույք 2073)։ Կավանոթը ունի քիչ նեղացող վիզ, ուռուցիկ իրան, նեղ հատակ և բնորոշ կիսագնդաձև կանթ (աղ. 1, նկ. 9)։ Երկրորդ կավանոթը (գույք 2074, աղ. 1, նկ. 8) ունի ուղղահայաց խողովակաձև վիզ, ձգված ուռուցիկ իրան և աղեղնաձև դուրս ճկված կանթ։ Զարդամոտիվներն են՝ գալարաղարդերը, տեղադրված երկու զուգահեռ հորիզոնական գծերի միջև, որից ներքև իրանի վրա արված է չորս գծերից բաղկացած զիգզագ, ծայրերը զարդարված պարույրներով, իսկ միջի տարածությունը ոոմբաձև նախշով։ Վերոհիշյալ առարկաները շատ բնորոշ են ինչպես Անդրկովկասի, այնպես էլ Հյուսիսային Կովկասի, Առաջավոր Ասիայի համապատասխան հուշարձանների համար և թվագրվում են մ. թ. ա. III հազարամյակի երկրորդ կեսով։ Պատահական գտնված այլ առարկաներից են՝ կտրվածքում կլոր բրոնզե ասեղը (գույք 1341)՝ ստացված Ա. Դասպարյանից 1936 թ.,

21 Տե՛ս Ս. Ա. Եսայան, Հայաստանի պատմական թանգարանի բրոնզե ապարանջանները, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1964, N 2, էջ 83—94, աղ. 3, նկ. 12։

22 Նույն տեղում, աղ. 3, նկ. 2, 7, 8։

23 Նույն տեղում, աղ. 2, նկ. 1, 2, 3։

քառակող կտրվածքով բրոնզե ասեղը (գույք 1342), կոտրված ծայրով երկաթե դանակը (գույք 1343), հասարակ, կլոր կտրվածքով բրոնզե ապարանջանները (գույք 1344 ա, բ), անդարդ, սև փայլով կճուճը (գույք 1345), դավաթը (գույք 1346), սև փայլով մեծ քրեղանը (գույք 1347)։ Երկու կավաման էլ հայտնի են Կ. Ղաֆադարյանի պեղումներից՝ սև, մեկ կանթանի, բարձր վզիկով կճուճ և սև կճուճիկ (գույք 1234—1235)։ Նշված վայրում են հայտնաբերվել նաև հինգ բրոնզե կլոր ապարանջանները (գույք 1300 a, b, d, c), որոնցից մեկը միացված ծայրերով է (գույք 1300 c)։



ԱՂՅՈՒՍԱԿ 1

Սրանք լայնորեն տարածված են Անդրկովկասի տերիտորիայի դամբարանային կոմպլեքսներում։ Այստեղից են ծագում նաև երկու մեծ, ոլորած

բրոնզե մանյակները (գույք 1299 ա, բ), որոնք բնորոշ են ինչպես մ. թ. ա. I հազարամյակի առաջին կեսի դամբարանային կոմպլեքսներին, այնպես էլ համեմատաբար վաղ շրջանին։

Լոռուտ. մ. թ. ա. III հազարամյակի նյութական մշակույթի առարկաներ հայտնաբերվեցին 1969 թ. հուլիսին, շինարարական աշխատանքների ժամանակ կաթի գործարանի մոտ պատահական բացված դամբարաններից (Ա. Քալանթարյանի հավաքածու)։ Այս նյութը առավել արժեքավոր է նրանով, որ կրում է վաղ բրոնզեդարյան բրուտագործական արտադրանքին բնորոշ զարդամոտիվներ, որոնք մինչ այդ տվյալ շրջանում հայտնի էին եզակի օրինակներով։ Բոլոր բեկորներն էլ արտաքուստ ունեն սև բնորոշ փայլ և վարդագույն կամ բաց դույնի աստառ։ Հիմնական ձևերից պետք է նշել լայն բերանով փոքր կճուճները, քիչ դուրս ծալված ու կլորացրած շրթով, որոնք զարդարված են մեծ ու փոքր կորնթարդ-զոդավոր պարույրներով և ակոսավոր գծերով, խորադիր ռոմբաձև նախշերով, եզրակավորված շրջանակներով և զիգզագ կազմող կարճ գծիկներով (աղ. 1, նկ. 1, 2, 3, 4)։ Հաջորդ ձևն է կոնաձև փոքրածավալ կավանոթը, որի ներքին մասը զարդարված է կետերով լցված խորադիր եռանկյուններով (աղ. 1, նկ. 5)։ Անզարդ կավամաններից է լայնաբերան կճուճի կեսը, բնորոշ երկարավուն կանթով (աղ. 1, նկ. 7)։ Վերջին ձևն է պուլիկաձև, զորշ դույնի, համեմատաբար կոպիտ անոթը (աղ. 1, նկ. 6)։ Բոլոր վերոհիշյալ առարկաները իրենց զուգահեռներն ունեն ինչպես Հայկական լեռնաշխարհի (Շենգավիթ, Շրեշ-բլուր, Մոխրաբլուր, Էլար, Թազավորանիստ, Լճաշեն, Հառիճ, Արևիկ, Գյոյ-թեփե և այլն), այնպես էլ Վրաստանի (Բեշտաշենի, Ամիրանիս-Գորա), Ադրբեջանի (Նախիջևանի Քյուլ-թափա, Աղստաֆա-չայ), Հյուսիսային Կովկասի (Լուգովոյե բնակավայր)[24] հուշարձաններում և հիմնականում թվագրվում են մ. թ. ա. III հազարամյակի երկրորդ կեսով։

Զորագլ. 1933 թ. շինարարական աշխատանքների ժամանակ պատահական հայտնաբերվեց վաղ տիպի հետաքրքիր կոմպլեքս, որը առաջին անգամ է հրատարակվում։ Նշված կոմպլեքսը բաղկացած է երեք միջին չափսի սև փայլեցրած կճուճներից, վգի ներսում վարդագույն աստառով (գույք 380, 381, 382, աղ. 1, նկ. 10)։ Այս իրերը իրենց մորֆոլոգիական առանձնահատկություններով (նեղ վիզ, դուրս ծալված շուրթ, կլոր ուռուցիկ իրան, տափակ հատակ) լրիվ համընկնում են միջին բրոնզեդարյան դունագարդ բրուտագործական արտադրանքի հետ։ Հաջորդ խումբը բաղկացած է երեք սև փայլեցրած, կտրված շրթով խորը քրեղաններից (աղ. 1, նկ. 11), որոնք ունեն դեպի տափակ հատակը իջնող ուղիղ պատեր և արտաքուստ ու պատրաստման տեխնիկայով նույնպես հիշեցնում են վաղ արտադրանքի նմուշները (գույք 383, 384, 385)։ Վերը շարադրածը թույլ է տալիս կոմպլեքսը թվագրել մ. թ. ա. II հազարամյակի առաջին քառորդով։ Նշված վայրից է ծագում նաև սուսերը (գույք 483), որը ունի վառ կանաչ ազնիվ բրոնզափառ, նեղ երկար շեղը (երկ.՝ 93 սմ, լայն. վերին մասում՝ 6 սմ), թեք ուսեր և ցայտուն արտահայտված միջին կող։ Նշված սուսերի օրինակները հայտնի են Սամթավրոյի № 243 դամբարանից, որոնք Տ. Ն. Զուբինիշվիլին թվագրում է մ. թ. ա. XVIII—XVI դդ.[25]։ Բ. Ա. Կուֆտինը այս իրերը թվագրում է մ. թ. ա. XV—XIV դդ., որը ավելի հավանական է թվում, քանի որ Կրետե-Միկենյան աշխարհում (արտադրանքի հայրենիքը) նրանք հանդիպում են երրորդ միջին մինոյան ժամանակաշրջանի կեսերին։

Ղաչառան. Վերոհիշյալի նման, բայց տարբերվող չափսերով սուսեր (երկ.՝ 90 սմ, շերտի լայն վերին մասում՝ 6 սմ) գտնվել է կողոպտված դամբանաբլուրի հատակին (գույք 1892/1)։ Սուսերը միկենյան տիպի է, ունի խաչաձև կտրվածք և կարճ ծալված դաստակ։ Ժամանակագրականորեն համապատասխանում է Զորագէսի սուսերին։

Փամբակ. Այստեղից հայտնի է տերևաձև, փոքր լայնվածքային սոնակով տեղի ծայրը (գույք 478, երկ.՝ 21,5 սմ, կոթի երկ.՝ 13,5, լայն. 2,5 սմ)։ Սրանց գոյությունը ընդգրկում է մ. թ. ա. I հազարամյակի սկզբից մինչև մ. թ. ա. VI դ.։ Հայտնի են Հայաստանի շատ շրջաններից (Դիլիջան, Գոլովինո և այլն)։ Այլ մետաղյա առարկաներից կան կտրվածքում կլոր ապարանջաններ՝ միացրած կամ անջատ ծայրերով (գույք 478, 498, 1000) և փոքր ապակյա ամրողջական մեկ ապարանջան (գույք 480)։

---

24 Է. Վ. Խանպադյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. III հազ., Երևան, 1967; Б. А. Куфтин. Археологические раскопки в Триалети, I, Тбилиси, 1941; Т. Н. Чубинишвили. Амиранис-Гора, Тбилиси, 1963; О. А. Абибуллаев, Археологические раскопки в Кюльтепе, Баку, 1959; Р. М. Мунчаев, Древнейшая культура Северо-Восточного Кавказа, «Материалы и исследования по археологии СССР» (МИА), 100.

25 Т. Н. Чубинишвили, К истории культуры раннего этапа позднебронзовой эпохи в Шида-Картли (автореферат диссертации), էջ 12—16։

Լոռի-Վարաբիլիա. Այսպիսի անվան տակ է նշված բրոնզե տափակ տերևաձև նետասլաքի ծայրը՝ նլուստավոր բեղիկներով և քառակող կոթով (գույք 479, աղ. 1, նկ. 12)։ Նկարագրված զենքը բնորոշ է Հայաստանի և հարևան երկրների համար և թվագրվում է պարզացած բրոնզե դարի ժամանակաշրջանով ու մ. թ. ա. I հազարամյակի առաջին երեք դարերով։ Բրոնզե ապարանջանները ներկայացված են լայնաթիթեղ, ծայրերը կոտրված ապարանջանով (գույք 479) և կտրվածքում կլոր, հարթ ապարանջանի բեկորով (գույք 479)։

Հաղբատ. Մեծ հետաքրքրություն է ներկայացնում 1936 թ. շինարարական աշխատանքների ժամանակ պատահական բացված դամբարանի նյութը՝ բրոնզե, միացված ծայրերով սեղմենտաձև երկու ապարանջաններ (գույք 481, 1310), մանյակի բեկոր (գույք 1311) և հարուստ պատկերապարդումներով պատած լայն բրոնզե գոտիների բեկորներ (գույք 1309)։ Գոտու կենտրոնական մասում պատկերված են ոճավորված եղջերուներ, տեղադրված երեք հորիզոնական շարքով։ Հաղբատի երկրորդ գոտին զարդարված է համեմատաբար քիչ ոճավորված եղջերուների ֆիգուրներով, որոնք տեղադրված են երկրաչափական նախշերից ազատ տարածությունների վրա։ Պետք է նշել, որ վերոհիշյալ գոտիները, որոշ տարբերությամբ, բնորոշ են Անդրկովկասի համար և մեծ հետաքրքրություն են ներկայացնում բրոնզե մետաղագործության տեղական օջախների միջև եղած փոխհարաբերության տեսակետից։ Թվագրվում են մ. թ. ա. I հազարամյակի առաջին քառորդով։

Սանահին. Այստեղ, անշուշտ, 12 կավանոթների, 4 ապարանջանների, մատանիների, ասեղի և այլ առարկաների հետ միասին պետք է նշվի քարարկղային դամբարանում գտնված բրոնզե լայն գոտին (գույք 1787), որը զարդարված է կենդանակերպ և երկրաչափական նախշերով։ Ծայրերում արված ուղղանկյուններում պատկերված են երկու զույգ ձիեր, կենտրոնականում՝ բացի ձիերից կան նաև լուսնաձև եղջյուրներով կենդանիներ, որոնք բնորոշ են Խոջալի—Գետաբեկի գոտիների համար։ Ձիերի ֆիգուրների վերևում և կենդանու կրծքի մոտ տեղավորված են շրջանակներ, նետեր և թռչունի ֆիգուր։ Ձիերն ունեն նաև հորիզոնական ձողերի տեսքի լուծ, որոնք զուգահեռներ ունեն Ախթալայի հայտնի գոտիների վրա պատկերված մարտակառքերում[26], Սևանի գոտիում[27] և այլն։ Այստեղ գտնված առարկաներից պետք է նշել պաշտամունքային կնիքը (գույք 1711)՝ զարդարված վերադիր նախշով, սրանք ուշ բրոնզի և երկաթի դարի սկզբնական շրջանի համար (մ. թ. ա. X—XI) բնորոշ խումբ են կազմում։ Կնիքը սև է, ուռուցիկ իրանով, շուրթը՝ զարդարված խորադիր երկշարք եղևնաձև նախշով։ Նման նախշով են պատած լայն կամարաձև կանթերը՝ դրված անոթի վերին մասում։ Նույն ուղղության վրա կանթերի և օձերի միջև տեղադրված են բաց բերաններով վագրերի և չորս օձերի ֆիգուրներ[28]։ 1946 թ. Մ. Մ. Գերասիմովը այստեղ պեղեց երկու դամբարան, որոնք պարունակում էին հիմնականում մ. թ. ա. I հազարամյակի առաջին քառորդին վերաբերող բնորոշ նյութեր։ Խեցեղենը ներկայացված է սև փայլեցրած կնիքներով։ Կանթերը մեծ են և վերին մասում ունեն երկկողմանի վերադիր դնդիկներ, որոնք նմանակում են մետաղյա կանթերը (Ռոնակ, էջմիածին, աղ. 2, նկ. 2)։ Կան նաև բիկոնիկ անղարդ ձևի կնիքներ և անոթներ՝ կարճ վզով ու վերին մասում տափակ նլուստով (գույք 2072/21, դամբ. 2, 2072/15, 18, դամբ. 1)։ Քրեղանները սև փայլեցրած են, ունեն ուղիղ իրանի և շրթի կտրուկ գծագրություն, ինչպես նաև կան իրանի սահուն ձևեր ունեցող քրեղաններ (գույք 2072/16, 17, 19, դամբ. 1, աղ. 2, նկ. 1)։ Պետք է նշել, որ այս խեցեգործական արտադրանքի որոշ տարրերը կապվում են համեմատաբար վաղ կոմպլեքսների հետ (բիկոնիկ իրանով կավանոթները)։ № 1 դամբարանը պարունակում էր նաև չնչին քանակությամբ մետաղյա իրեր՝ հասարակ, հարթ, կտրվածքում կլոր, անջատված ծայրերով ապարանջաններ (գույք 2072/11, 13) և մեծ միաձույլ բրոնզե ասեղ (գույք 2072/14, երկ.՝ 12 սմ), որը լայնորեն տարածված էր բրոնզի դարի վերջի և երկաթի դարի սկզբնական շրջանի Անդրկովկասի դամբարանային կոմպլեքսներում։ Հետաքրքիր են նույն դամբարանի ուլունքները, որոնք հանդիպում են ինչպես ուշ (մ. թ. ա. I հազարամյակի սկիզբ), այնպես էլ համեմատաբար վաղ կոմպլեքսներում։ Դրանք են՝ երկնագույն և սպիտակ շաղախից ուլունքները (գույք 2072/1), ինչպես նաև մեկ և երկկողմանի շաղախված սերդոլիկե ուլունքները (գույք 2072/3, 6, 8, 9)։ Պատահական բացված դամբարանից է ծագում մեկ կանթանի, զորշ փայլեցրած կնիքը, կտրված շրթով, զարդարված հորիզոնական խորադիր գծերով, որի հիմքից շարունակվում են փայլով ար-

26 J. de Morgan, նշվ. աշխ., նկ. 145։

27 Ե. Ա. Լալայան, Դամբարանների պեղումները խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 105։

28 Տե՛ս Հ. Մնացականյան, Արևապաշտության հետքերը Հայաստանում, պետ. պատմ. թանգարանի «Աշխատություններ», Երևան, 1948, հատ. I, էջ 74—76։

ված լայն ուղղահայաց ժապավեններ (գույք 2072/20, աղ. 2, նկ. 3)։ Նշված վերջին զարդը հանդիսանում է ուշ բրոնզեդարյան բրուտագործության արտադրանքի փայլով արված հոյակապ զարդամոտիվների հետագա զարգացում (Թազաբենդ, Լճաշեն, Արթիկ և այլն)։ Բացի վերոհիշյալից Գ. Լևոնյանը պետ. պատմական թանգարան է հանձնել մի շարք պատահական հայտնաբերված առարկաներ, որոնք հիմնականում ընդգրկում են մ. թ. ա. I հազարամյակի առաջին քառորդը։ Դրանք են՝ բնորոշ սև փայլեցրած, նեղ վզով և ուռուցիկ իրանով կճուճները, որոնց կանթի վրա վերին մասում կան վերադիր կոնակաձև զարդեր (գույք 107), սև փայլեցրած լայնաբերան դավաթը՝ նույնանման կանթերով (գույք 107), լավ փայլով, շրթի և իրանի սահուն գծերով և նստուկով սև քրեղանը (գույք 211)։ Պատահական գտնված մետաղյա առարկաներն են բրոնզե զանգվածեղ (գույք 134ա, բ), հասարակ լարից (գույք 135), լայն ապարանչները՝ երկշարք խորադիր զիգզագով (գույք 142), բրոնզե հարթ մանյակը (գույք 137), փոքր քունքային օղակներով (գույք 138), փոքր տափակ բրոնզե գործիքը, վերին մասում նեղացող (գույք 140), որը ծառայում էր, ըստ երևույթին, քերելու համար։ Վերոհիշյալ նյութը



ԱՂՅՈՒՍԱԿ 2

լայն տարածում ուներ մ. թ. ա. I հազարամյակի առաջին կեսի Անդրկովկասի դամբարանային կոմպլեքսներում։

Սամուտ. 1969 թ. հուլիսին կիկլոպյան ամրոցի ստորոտում Ա. Քալանթարյանը դետնի մակերեսից հավաքեց սև փայլեցրած խեցեղենի բեկորներ։ Դրանք են՝ քրեղաններ՝ պրոֆիլային իրանով, զարդարված խորադիր և փայլեցված ալիքաձև գծերով, ինչպես նաև մեկ բեկոր՝ փայլով արված ցանցաձև նախշով, որոնք բնորոշ են ուշ բրոնզի դարի և երկաթի վաղ շրջանի համար (մ. թ. ա. II հազարամյակի վերջ, I հազարամյակի առաջին քառորդ) և լայն տարածում ունեն Անդրկովկասի դամբարանային նյութերում (Գոլովինո, Խրտանոց, Դիլիջան և այլն)։

Մարգ. Այստեղից է գտնվել կոպիտ, մեկ կանթանի սև կճուճը, նեղ վզով և ուռուցիկ իրանով։ Թվագրվում է մ. թ. ա. IX—VIII դդ.։

Իսեղ. Այստեղ ճաշարանի հիմքը փորելիս բացվեցին ավելի քան 10 քարարկղային տիպի դամբարաններ, որոնց պատերը շարված էին ծակոտկեն բազալտից։ 1965 թ. մայիսին մեր կողմից ուսումնասիրություններ կատարվեցին նշված վայրում։ Մեր ժամանելու պահին պարզվեց, որ տեղի բնակիչները բոլոր առարկաները վերցրել էին։ Այդ իսկ պատճառով հնարավոր չէ վերլուծել նյութը ըստ կոմպլեքսների։ Հաջողվեց հավաքել 11 գանգան կավանոթներ։ Դրանք են սև փայլեցրած, նեղ վզով և լայնաբերան անկանթ կճուճները, որոնք ուսերի վրա կրում են խորադիր հորիզոնական զուգահեռ գծեր և եղունգային զարդ, կտրված շրթով, ուղիղ իրանով սև փայլեցրած կճուճը, որը շրթի վրա երկու կողմից երկու զույգ անցքեր ունի՝ կախելու համար։ Զարդամոտիվները սուր ծայրերով միացված խորադիր եռանկյունիներ են, տեղադրված անոթի վերին մասում (աղ. 2, նկ. 7)։ Հաջորդ խումբը սև փայլեցրած մեկ կանթանի կճուճներն են՝ նեղ վզով, դուրս ծալված շրթով, ուռուցիկ իրանով, որը զարդարված է փայլեցմամբ արված նեղ ու լայն ուղղահայաց ժապավեններով և եռանկյունիներով (աղ. 2, նկ. 4, 5, 6)։ Նշված զարդերը հանդիսանում են համեմատաբար վաղ շրջանի (XIV—XII դդ. մ. թ. ա., Թազաբենդ, Լճաշեն, Արթիկ) փայլուն օրինակների հետագա զարգացումը և թվագրվում են մ. թ. ա. X—IX դդ.։ Այս նյութը նշված ժամանակաշրջանով է թվագրում նաև Գ. Արեշյանը։ Վերջին տարիների ընթացքում Իջևանի շրջանի Ֆնոբավան գյուղի մոտ, Աստղիբլուր կոչվող վայրում պեղված դամբարաններից հայտնաբերվել է նման խեցեղեն-29։ Եզակի օրինակով է ներկայացված սև փայլով, ուղիղ իրանով, մեկ կանթանի գավաթը, որը կտրված շրթի տակ ունի խորադիր հորիզոնական գծեր (աղ. 2, նկ. 9)։ Վերջին խումբն են կազմում սև փայլեցրած խորը քրեղանները՝ ցայտուն արտահայտված շրթով, կլորացրած իրանով, որոնցից մեկը շրթի տակ ունի մի քանի լայն խորադիր հորիզոնական գծեր (աղ. 2, նկ. 8)։ Դամբարաններից են ծագում նաև մեկ և երկկողմանի փորված անցքով 9 սերդոլիկե ուլունքները։ Բոլոր վերոհիշյալ առարկաները բազմաթիվ զուգահեռներ ունեն Անդրկովկասի մ. թ. ա. I հազարամյակի առաջին կեսի դամբարանային կոմպլեքսներում։ 1969 թ. հուլիսին Դսեղում, հողային աշխատանքների ժամանակ, պատահաբար բացվեց մի դամբարան, որի նյութը ներկայացված է զանգան կավանոթներով (Ա. Քալանթարյանի հավաքածուն)։ Դրանք են՝ անկանթ, ցածր վզով, ցայտուն շրթով և ուռուցիկ իրանով սև կճուճը, որի վերին մասը զարդարում են ալիքավոր և ուղիղ խորադիր գծերը (աղ. 2, նկ. 10), լայնաբերան, ուռուցիկ իրանով, ուսերի վրա մի շարք եղունգային զարդով սև կճուճը, մեկ կանթով, կարճ վզով, ուռուցիկ իրանով, ուսերի վրա երկու հորիզոնական գծերով, սև փայլով կճուճը, սև լավ փայլեցրած գավաթը՝ պրոֆիլային, բիկոնիկ ձևի իրանով, կանթը վերին մասում ունի սրացած ելուստ (աղ. 2, նկ. 11)։ Քրեղանները երեքն են, սև փայլով։ Վերոհիշյալ արտադրանքը տիպիկ է մ. թ. ա. I հազարամյակի առաջին քառորդի համար և լավ կապվում է Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի համապատասխան ժամանակաշրջանի դամբարանային նյութի հետ[30]։ 1960 թ. մայիսին, հողային աշխատանքների ժամանակ, պատահաբար հայտնաբերվեց սև փայլեցրած կճուճ՝ իրանի վրա փայլեցմամբ արված թեք գծիկներով (գույք 2039ա, աղ. 2, նկ. 12)։ Այս կավամանը իր արտաքին առանձնահատկություններով և զարդամոտիվներով համընկնում է այն բնորոշ արտադրանքի հետ, որը լայն տարածում ստացավ ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանում (մ. թ. ա. XIV—XII դդ.) և զուգահեռներ ունի այնպիսի հուշարձաններում, ինչպիսիք են Թազա-

---

29 С. Есаян, Погребение № 14 Астхиблурского могильника, «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 1, էջ 221—226։

30 1969 թ. Դսեղում բացված Լոռիի ազգագրական թանգարանում ցուցադրվում է նաև շրջակայքում հայտնաբերված հնագիտական նյութը, որը հիմնականում պատկանում է մ. թ. ա. I հազարամյակին։ Նույն թվականի ամռանը հողային աշխատանքների ժամանակ բացվել են դամբարաններ՝ մ. թ. ա. I հազարամյակի առաջին կեսին պատկանող բնորոշ նյութով։

քենդը, Լճաշենը, Արթիկը, Գեղարոտը, Լուսակերտը[31] և այլն։

Օձուն. 1955 թ., հողային աշխատանքների ժամանակ, տեղի բնակիչ Կ. Վ. Երիցյանի տան բակում բացվեցին դամբարաններ, որոնք պարունակում էին մ. թ. ա. II հազարամյակի վերջին, մ. թ. ա. I հազարամյակի առաջին քառորդին բնորոշ նյութեր։

Դամբարան 1. Երեք սև փարչ, մեկ գավ, մեկ պուլիկ, 13 բրոնզե ապարանջաններ, բրոնզե օղակ՝ խորադիր գծիկներով, երեք բրոնզե ճարմանդներ, ապակյա և շաղախից ուլունքներ։ Այստեղ հետաքրքիր են ճարմանդները, որոնք հայտնի են Լճաշենի, Արթիկի և Դիլիջանի պեղումներից։

Դամբարան 2. Սև, անկանթ կճուճ, սև, լայնաբերան քրեղան։

Դամբարան 3. 2 սև գավաթ։

Դամբարան 4. Մեկ սև պնակ (գույք 1945)։

1958 թ. Օձունի բնակիչ, կոլտնտեսական Դավիթ Հովհաննիսյանը իր բակում հիմք փորելիս պատահաբար հայտնաբերում է երկու դամբարան, որոնց նյութը հիմնականում պատկանում է մ. թ. ա. I հազարամյակի առաջին կեսին և հայտնի է Անդրկովկասի բազմաթիվ հուշարձաններից։ 1967 թ. ամռանը պետ. պատմական թանգարանին տեղյակ պահեցին այն մասին, որ գյուղի դպրոցի մոտ կաբել անցկացնելիս հայտնաբերվել են հնագիտական իրեր։ Այստեղ դեռևս 1938 թ., դպրոցի շենքի շինարարության ժամանակ, գտնվել էին ոսկե և արծաթե իրեր ու բրոնզե դաշույն, որոնք ներկայացնում են Անդրկովկասի բնակչության բարձր մշակույթը և պատկանում են նյութական մշակույթի այնպիսի հայտնի նմուշների թվին, ինչպիսիք են Սալկայի նյութերը[32]։ Տողերիս հեղինակը գործուղվեց նշված վայրը, որտեղ արդեն կողոպտված քարարկղային տիպի դամբարաններից հաջողվեց հավաքել որոշ հնագիտական նյութ՝ հիմնականում մ. թ. ա. I հազարամյակի առաջին քառորդի։ Դրանք են՝ երկու սև փայլեցրած մեկ կանթանի կճուճները, որոնցից մեկը իրանի վրա ունի ցանցաձև զարդ՝ կազմված թույլ խորադիր գծերից (աղ. 2, նկ. 13). երեք սև փայլեցրած գավաթները (աղ. 2, նկ. 14), բնորոշ է նաև մեծ, սև, անկանթ կճուճը, ցածր վզով և կլոր ուռուցիկ իրանով, զարդարված փայլեցմամբ արված թեք գծիկների շարքով. եղակի օրինակով է ներկայացված կարմիր փայլեցրած կճուճը, բիկոնիկ իրանով (աղ. 2, նկ. 16). քրեղանները երկուսն են, սև փայլով և նույնպես սովորական են Անդրկովկասի նշված ժամանակաշրջանի նյութերի համար (աղ. 2, նկ. 17)։

Մարեր. Այստեղից է գտնված պատահաբար հայտնաբերված, համեմատաբար ուշ ժամանակաշրջանին պատկանող կարմիր փայլեցրած մեկ կանթանի կճուճը՝ ցայտուն արտահայտված երեքնուկի (օյնոխոյա) տիպի պսակով։ Շուրթը երկու կողմից ունի վերադիր ճարմանդաձև զարդ։ Հատակը բնորոշ լայն է (աղ. 2, նկ. 18)։ Երեքնուկի նման պսակով անոթներ հայտնի են մի շարք երկրներից։ Կարելի է ասել, որ դա ամենատարածված և երկար պահպանված ձևերից է եղել։ Հայաստանում այն հայտնի է դեռևս ուրարտական շրջանից և հարատևում է մինչև ուշ միջնադար։ Նշված արտադրանքը տարածված է եղել նաև Վրաստանում[33] և Ադրբեջանում[34]։ Պետ. պատմական թանգարանում պահվում է նման մի անոթ Ծովինարից[35], որը կանթի և պսակի ձևով ու մշակմամբ նման է Ծաթերի նմուշին, մեծ քանակությամբ հանդիպում է Արմավիրի հելլենիստական դունավարդ խեցեղենի մեջ և թույլ է տալիս այն թվագրելու մ. թ. ա. III—I դդ.։

Այսպիսով, վերոհիշյալ հուշարձանների ուսումնասիրումը ցույց է տալիս, որ Թումանյանի շրջանը հարուստ է տարբեր ժամանակաշրջաններն ընդգրկող նյութական մշակույթի մնացորդներով և բավական արժեքավոր տվյալներ է տալիս թե՛ տեղական մշակույթի պղնձե-բրոնզեդարյան և վաղ երկաթի դարի բնորոշման և թե՛ այնպիսի պրոբլեմների լուծման համար, ինչպիսիք են Անդրկովկասի և հարևան երկրների հետ տեղական մշակույթի փոխհարաբերությունների հարցերը։ Թումանյանի շրջանը, անշուշտ, հատուկ տեղ է գրավում հնագիտական վայրերի շարքում այն պատճառով, որ այստեղ գոյություն ունի այնպիսի կարևոր գործոն, ինչպիսին է պղնձի հանքի առկայությունը։ Համեմատաբար հեռավոր վայրերում (գյուղ Պիեղնաուրի, Դմանիսիի շրջան) հայտնաբերված հին-

---

31 Լ. Լ. Կարապետյան, Բրոնզի դարի և վաղ երկաթի նոր հուշարձան Հրազդան գետի ավազանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4, էջ 280, աղ. 1, նկ. 4, 5։

32 «Новое в советской археологии» (сборник, посвященный памяти С. В. Киселева), М., 1965, էջ 26։

33 Б. А. Куфтин, նշվ., աշխ., աղ. 15։

34 О. Ш. Исмизаде, Ялойлутепинская культура, Баку, 1956, աղ. 1_4, 7_8, 12_8, 14_{11}, $15_{1,2,8}$, 16_2, 31_4։

35 Տե՛ս Ժ. Խաչատրյան, Հայաստանում գտնված դունավարդ խեցեղենի մի քանի նմուշներ, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 1, էջ 255, աղ. 1_3։

արևելյան տիպի կոցավոր կացինը, որը մեղ մոտ, ինչպես և այլ վայրերում, փոքր խումբ է կազմում, հանգեցնում է այն մտքին, որ ուսումնասիրվող շրջանը կարող էր լինել որոշակի մետաղյա առարկաների մատակարարման արտադրական կենտրոն։ Բերված նյութը, անկասկած, վկայում է այն մասին, որ Թումանյանի հնագիտական շրջանը մեծ նշանակություն ունի Հայաստանի մ. թ. ա. III—I հազարամյակների մշակույթը ուսումնասիրելու համար։

Լ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ИССЛЕДОВАНИЕ НЕКОТОРЫХ ОЛОВЯННЫХ ПРЕДМЕТОВ, НАЙДЕННЫХ В АРМЕНИИ*

Использование олова человеком в древности представляет один из невыясненных вопросов истории материальной культуры древнего мира и, в частности, стран Ближнего Востока и Кавказа. Им в основном пользовались для легирования меди, т. е. для приготовления оловянистой бронзы. Не случайно поэтому, что находки предметов из олова единичны, в то время как металлических изделий из оловянистой бронзы обнаруживается достаточно много.

Вопрос о последовательности в открытии олова и бронзы также представляется не совсем ясным. Факты как будто говорят за то, что человек познакомился с оловом позже, чем с бронзой. Во всяком случае находки оловянно-бронзовых изделий относятся к памятникам более раннего периода, в то время как изделия из олова датируются хронологически поздним временем. До настоящего времени исключение составляет единственный «оловянный браслет», найденный в городище «Терми IV» на о-ве Лесбос[1].

Конечно, прежде чем научиться приготовлять оловянистую бронзу, человек должен был сначала познать олово в качестве металла. Его ограниченное использование в быту можно объяснить пластическими свойствами, почему в древности оно шло на изготовление различных предметов украшений, как, например, колец, височных подвесок, браслетов, пуговиц и т. п.

Исследователи отмечают, что во II тысячелетии до н. э. (1400—1050) в Ассирии олово в виде колец использовалось в качестве денежной единицы[2]. О находках на Кавказе древних оловянных изделий в литературе имеются весьма скудные сведения; касаются они Азербайджана[3] и Грузии[4]. Залежи олова имелись в Иране[5].

Относительно территории Армянской ССР в литературе обычно указываются лишь два «оловянных» предмета, датируемых II—I тысячелетием до н. э.[6] Первое—это подвеска, найденная в с. Ворнак (ныне Акнер) Алавердского района (исследована лабораторией ГАИМК в Ленинграде); второе—обломки привесок из раскопок Ж. де Моргана (исследованы французским химиком-естествоиспытателем Марселеном Бертло).

Оба они изготовлены из сплава олова со свинцом, но во втором случае содержание свинца (85, 53%) превалирует над оловом (6—35%), так что правильнее было бы эти обломки привесок определять как свинцо-

---

* Работа выполнена в рамках сотрудничества Гос. музея истории Армении и Института истории АН Азерб. ССР.

[1] См. W. Lab, Excavations of thermi in Lesbos, Cambridge, 1936, стр. 171—173.

[2] См. S. Smith, Early History of Assiria to B. C. 1928, стр. 149—185, 323. Ա. Խաչատրյան, Հայաստանի-սկզբից շրջանի քննական պատմություն, Երևան, 1933, стр. 299—300.

[3] См. М. А. Кашкай, И. Р. Селимханов, Исследование металлических изделий древнего Мингечаура эпохи развитой бронзы, Баку, 1959, стр. 11—13.

[4] См. Ф. Тавадзе, Т. Сакварелидзе, Бронзы древней Грузии, Тбилиси, 1958, стр. 52—54.

[5] См. Strabon, գիրք XV, գլ. II, § 19.

[6] Они упоминаются также А. А. Иессеном (см. «Олово Кавказа», Изв. ГАИМК, вып. 110, М.—Л., 1935, стр. 193—205).